

մասին. այս կէտին անդրադարձանք արդէն էջ 41—46, ուր խօսեցանք մանրամասնօրէն նաեւ Հռիփսիմեանց նշխարաց շուրջը յուսուած խնդրոց վրայ:

Կը գրէ Մեւքիսեղեկ, թէ «հանդերձ եպիսկոպոսակցօք» կարդացած է Պօղոս Ե.ի թուղթը: Այս եպիսկոպոսները անշուշտ կաթողիկոսին համակիրներն եւ խորհրդակիցներն, ուրիշ խօսքով կուսակիցներն էին, որոնք իբրեւ «Երեւանցիներ» գիրք բռնած էին «Ջուղայեցի»ներու գէմ: Ինչպէս ժամանակակից մը, P. Tadeo di S. Eliseo Բոկոտոն Կարմեղեանց փոխ-ընդհանրականն ի Սպահան¹⁹, կը գրէր 1611ին, այս շրջանին Հայոց եկեղեցին երկու կուսակցութեան բաժնուած էր. Երեւանցիները կը պաշտպանէին Մեւքիսեղեկի կողմը, եւ Ջուղայեցիները՝ Դաւիթ կաթողիկոսի կողմը, թէեւ սա հրաժարած էր կաթողիկոսութենէն, թողլով իշխանութիւնը Մեւքիսեղեկի ձեռքը: Պատմական լուսաբանութեան համար կարեւոր կը համարիմ հոս յանուանէ յիշատակել այն եպիսկոպոսները, որոնք Մեւքիսեղեկի կողմը կը պաշտպանէին եւ կը կազմէին «Երեւանցիներու» կուսակցութիւնը: Այս անունները համադրուած կը գտնեմ 1611, Մայիս 1ին Մեւքիսեղեկի գրած մէկ կոնդակին մէջ²⁰, որով զԶաքարիա վարդապետ եւ զԴա-

¹⁹ Propaganda, t. 189 (Lusitania, India et Japonia), f. 186.

²⁰ Հրատարակած է Հ. Ղ. Ալիշան, Կամենից, էջ 239—240: